Հարց

Նորածին որդեգրած վարձու աշխատողին տրվո՞ւմ է, արդյոք, մայրության նպաստ:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին մայրության նպաստ վճարվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Նպաստը վճարվում է որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի նորածին որդեգրած կամ խնամակալ նշանակված անձին՝ մինչև 110 օրական դառնալը) ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

Հարց

Անհատ ձեռնարկատիրոջը տրամադրվու՞մ է, արդյոք, մայրության նպաստ, եթե նա հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակ չի դադարեցնում գործունեությունը:

Պատասխան

Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու օրվանից: Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու օր է համարվում իր հաշվառման վայրի հարկային տեսչություն ներկայացրած՝ անորոշ կամ որոշակի ժամկետով գործունեություն չիրականացնելու (գործատու չհանդիսանալու՝ վարձու աշխատող չունենալու և ֆիզիկական անձանց աշխատանքը, ծառայությունները փաստացի չօգտագործելու, ինչպես նաև որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանց կամ ոչ ռեզիդենտ կազմակերպություններին եկամուտներ փաստացի չվճարելու) մասին հայտարարությունում նշված օրը: Ընդ որում, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստ չի վճարվում, եթե ժամանակավոր անաշխատունակությունը ծագել է օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության դադարեցումից (այդ թվում՝ ժամանակավոր դադարեցումից) հետո:

Հարց

Վարձու աշխատողը մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդից հետո վերադարձել է աշխատանքի ամսվա կեսին, իսկ հաջորդ ամսվա ընթացքում բացակայել է աշխատանքից՝ ներկայացնելով ժամանակավոր անաշխատունակության թերթիկ: Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկելիս որպես հաշվարկային ժամանակահատվածի եկամուտ ո՞ր ամիսների եկամուտն է հիմք ընդունվում:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վարձու աշխատողի *ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկման նպատակով* հիմք

ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան *նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների (հաշվարկային ժամանակահատված) համար տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով:* Նույն հոդվածի 9-րդ մասի և ԼՂՀ կառավարության 14.03.2012թ. N 110-Ն որոշմամբ հաստատված «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման» կարգի 23-րդ կետի համաձայն՝ եթե *հաշվարկային ժամանակահատվածը* ներառում է նաև վարձու աշխատողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու ամիսներ, ապա այդ ամիսներից յուրաքանչյուրի համար որպես եկամուտ հաշվառվում է խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ամսին աշխատանքային պայմանագրով կամ ԼՂՀ օրենսդրությամբ տվյալ վարձու աշխատողի պաշտոնի համար ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված (անկախ հաշվարկվելու հանգամանքից) կամ հաշվարկված հիմնական աշխատավարձը:

Մասնավորապես, եթե վարձու աշխատողը մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդից հետո վերադարձել է *աշխատանքի ամսվա կեսին*, իսկ հաջորդ ամսվա ընթացքում բացակայել է աշխատանքից՝ ներկայացնելով ժամանակավոր անաշխատունակության թերթիկ, որպես *հաշվարկային ժամանակահատվածի եկամուտ* է հաշվառվում *անաշխատունակությանը նախորդող ամսվա համար տվյալ վարձու աշխատողին վճարված աշխատավարձի և խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ամսին աշխատանքային պայմանագրով կամ ԼՂՀ օրենսդրությամբ տվյալ վարձու աշխատողի համար սահմանված հիմնական աշխատավարձի տասնմեկապատիկի հանրագումարը:*

Հարց

Վարձու աշխատողի հիվանդության նպաստը հաշվարկելիս, եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը պակաս է տասներկու ամսից, արդյո՞ք, հաշվարկային ժամանակահատվածում հաշվի է առնվում նաև այլ գործատուի՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատանքի անցնելը վճարված եկամուտը:

Պատասխան

Ոչ: «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հիվանդության նպաստը հաշվարկելիս հաշվի են առնվում միայն *տվյալ գործատուի կողմից* վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով:

Հարց

Վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկելիս, ո՞րն է համարվում միջին ամսական աշխատավարձի հաշվարկման առավելագույն չափ, եթե վերջինս միաժամանակ հանդիսանում է համատեղությամբ աշխատող՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ և 22-րդ հոդվածի 5-րդ մասերի համաձայն՝ եթե համատեղությամբ աշխատող՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի չափը

հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկը (69620 x 15 = 1044300 դրամ), ապա վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից:

Հարց

Համատեղությամբ աշխատելու դեպքում մայրության նպաստը հաշվարկելու և վճարելու համար հիմնական աշխատավայրի գործատուին ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում:

Պատասխան

Համատեղությամբ աշխատելու դեպքում մայրության նպաստը հաշվարկելու, նշանակելու և վճարելու համար հիմնական աշխատավայրի գործատուին ներկայացվում է՝

- բժշկական հաստատության տված անաշխատունակության թերթիկը,
- այլ գործատուի տված փաստաթուղթը (տեղեկանքը կամ հղիության և ծննդաբերության արձակուրդ տրամադրելու հրամանի քաղվածքը)՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի մասին (գործատուի տված փաստաթղթում ներառվում են աշխատանքային պայմանագրի տեսակը (որոշակի կամ անորոշ ժամկետով կնքված), պայմանագիրը կնքելու օրը, ամիսը, տարեթիվը, իսկ եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է որոշակի ժամկետով, նաև պայմանագրի ժամկետի ավարտը՝ անկախ լուծվելու հանգամանքից), ինչպես նաև լիազոր մարմնի կողմից տված՝ այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկանքը,
- եթե ժամանակավոր անաշխատունակությունը ծագելու օրվա դրությամբ վարձու աշխատողը նաև անհատ ձեռնարկատեր է՝ հարկային մարմնի տված, որպես ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ, իր գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած լինելու և ժամանակավոր անաշխատունակությունը ծագելու դեպքին նախորդող տարվա՝ օրենքով սահմանված եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի (եկամտային հարկի) մասին տեղեկանքը:

Հարց

Ի՞նչ ժամկետում և կարգով է վճարվում սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված նպաստի գումարը:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ պակաս վճարված նպաստի գումարը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման, ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից՝ սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Հարց

Ո՞վ պետք է կատարի մայրության նպաստի հաշվարկումը, եթե վարձու աշխատողը միաժամանակ հանդիսանում է նաև անհատ ձեռնարկատեր:

Պատասխան

Վարձու աշխատողը, միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսանալու դեպքում, մայրության նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է հիմնական աշխատավայրի գործատուն:

Հարց

Ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է 2015թ. դեկտեմբեր ամսում և շարունակվում է 2016 թվականին: Տվյալ դեպքում նպաստի հաշվարկը կատարելու համար կիրառվու՞մ է, արդյոք, 80 տոկոս սահմանաչափ:

Պատասխան

Եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, ապա ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում են մինչև 2016 թվականի հունվարի 1-ը սահմանված կարգով (պայմաններով), այսինքն միջին ամսական աշխատավարձը որոշելիս տոկոսաչափը (80%) չի կիրառվում:

Հարց

Կա՞, արդյոք, միջին ամսական աշխատավարձի հաշվարկման առավելագույն չափ՝ վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկելիս:

Պատասխան

Այո: Եթե վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկը (69620 x 15 = 1044300 դրամ), ապա վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից:

Հարց

Շարունակվող անաշխատունակության թերթիկի (հիվանդություն) դեպքում առաջին աշխատանքային օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրերի համար գործատուն վարձու աշխատողի նպաստը, արդյո՞ք, կրկին վճարում է իր միջոցների հաշվին:

Պատասխան

ժամանակավոր անաշխատունակության նույն դեպքի (շարունակության) համար ժամանակավոր անաշխատունակության առաջին աշխատանքային օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրերի համար վարձու աշխատողի նպաստը վճարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Այսինքն, գործատուն իր միջոցների հաշվին նպաստը վճարում է մեկ անգամ՝ անկախ ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի համար ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թերթիկների քանակից:

Հարց

Մայրության նպաստի հաշվարկման ժամանակ միջին ամսական աշխատավարձի չափը 69 620 ՀՀ դրամից ցածր լինելու դեպքում, ինչպե՞ս է հաշվարկվում նպաստը:

Պատասխան

Եթե «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը կամ եկամուտը պակաս է 69 620 ՀՀ դրամից, ապա որպես միջին ամսական աշխատավարձ հիմք է ընդունվում 69 620 ՀՀ դրամը:

Հարց

Վարձու աշխատողը ներկայացրել է 3 ամսից ավելի անաշխատունակության թերթիկ, գործատուն իրավունք ունի՞ վճարելու նպաստ ամբողջ ժամանակաշրջանի համար:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողին հիվանդության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամության խմբի սահմանումը կամ հաշմանդամության խմբի վերանայումը: Տևական հիվանդության դեպքում վարձու աշխատողները բժշկասոցիալական փորձաքննության են ուղեգրվում անաշխատունակությունը սկսելու օրից 3 ամսից ոչ ուշ: Եթե բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի որոշման համաձայն վարձու աշխատողը հաշմանդամ չի ճանաչվում, բայց շարունակում է դեռևս մնալ անաշխատունակ, ապա հիվանդության նպաստ ստանալու նրա իրավունքը կարող է շարունակվել, բայց ոչ ավելի, քան մինչև 3 ամիս ժամկետով կամ մինչև օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատվելը:

Հարց

Ինչպե՞ս է հաշվարկվում վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից (եկամտից): Միջին ամսական աշխատավարձը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի (ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստ նշանակելու դեպքում՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) օրացուցային օրերի թվով:

Հարց

Ինչպե՞ս է հաշվարկվում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը:

Պատասխան

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի (եկամտի) ութսուն տոկոսից: Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը բաժանվում է 25-ի (հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 21-ի) և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի երկրորդ աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով:

Հարց

Տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների վճարման համար չբավարարելու դեպքում ի՞նչ կարգով են վճարվում նպաստները:

Պատասխան

Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված բոլոր վարձու աշխատողների եկամտային հարկի ընդհանուր գումարը բավարար չէ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների վճարման համար, ապա գործատուն նպաստների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հաշվին վճարվող գումարների պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ գործատուի կողմից հարկային մարմին ներկայացված տեղեկանքի հիման վրա՝ հարկային մարմնի հաստատած տեղեկանքը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում: